

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ



- Մարզկենտրոնը՝**  
ք. Արտաշատ
- Տարածաշրջանները՝**  
Արարատ,  
Արտաշատ,  
Մասիս
- Քաղաքները՝**  
Արտաշատ,  
Մասիս,  
Արարատ,  
Վեդի

Տարածքը	2 090 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	93
Քաղաքներ	4
Գյուղեր	95
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	260.1 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	74.0 հազ. մարդ
գյուղական	186.1 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	8.6 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	28.4 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	156 916.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	25 382.1 հա

**Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի պետական արգելոցը** (ծովի մակերևույթից 1 600-2 300 մ բարձրության վրա):

**ՀՀ Արարատի մարզը** հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

**Մարզի տարածքով է** անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Ղարաբաղ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին:

2014թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 10.2 %,
- գյուղատնտեսություն՝ 14.2 %,
- շինարարություն՝ 3.5 %,
- մանրածախ առևտուր՝ 2.0 %,
- ծառայություններ՝ 1.5 %:

Տնտեսության հիմքը **գյուղատնտեսությունն է**: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

**Քեռնատղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

**Արդյունաբերության** առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ **արդյունաբերության** հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),

բ) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա),

գ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ասբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

**Արտաշատ քաղաքը** (2014թ. տարեվերջին՝ 21.5 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (կղմինդրի, աղյուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

**Արարատ քաղաքը** (2014թ. տարեվերջին՝ 20.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):


**Վեդի քաղաքը** (2014թ. տարեվերջին՝ 11.6 հազ. բնակիչ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսապատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

**Մասիս քաղաքը** (2014թ. տարեվերջին՝ 20,5 հազ. բնակիչ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը (մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում), թղթից և ստվարաթղթից արտադրատեսակների արտադրություն և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ**



**ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	<b>Քանակը</b>				
	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>	<b>2014</b>
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 266	1 281	1 316	1 172	1 184
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	1 082	1 092	1 127	1 027	1 037
կրպակներ	118	122	111	77	75
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	3	3	3	3	3
առևտրի այլ օբյեկտներ	62	63	74	64	68

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	<b>Քանակը</b>				
	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>	<b>2014</b>
Պետական նախադպրոցական	66	73	74	75	77
Պետական հանրակրթական	112	112	112	112	112
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	22	22	22	22	23
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	1	1	1	1	1
Պետական միջին մասնագիտական ուսումնական	4	4	4	4	4
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2	-	-

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրի անվանումը</b>	<b>Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *</b>
Արտաշատ	ք. Արտաշատ	21 475
Մասիս	ք. Մասիս	20 533
Արարատ	ք. Արարատ	20 369
Վեդի	ք. Վեդի	11 599

\* ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

**ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրի անվանումը</b>	<b>Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **</b>
<b>Արտաշատի տարածաշրջան</b>			
1	Աբովյան		1 444
2	Ազատական		3 044
3	Այգեգարդ		3 012
4	Այգեպատ		1 689
5	Այգեստան		2 418
6	Արաքսավան		840
7	Արևշատ		2 371
8	Բերդիկ		1 002
9	Բերքանուշ		2 037
10	Բաղրամյան		1 951
11	Բարձրաշեն	•Բարձրաշեն •Կաքավաբերդ	1 584
12	Բյուրավան		1 468
13	Բուրաստան		2 055
14	Գետազատ		2 007
15	Դալար		2 541
16	Դեղձուտ		947
17	Դիմիտրով		1 351
18	Դիտակ		788
19	Դվին		2 919
20	Ոստան		3 041
21	Ջրաշեն		1 834
22	Հովտաշեն		1 112
23	Հնաբերդ		699
24	Լանջազատ		1 498
25	Վերին Դվին		2 200
26	Վերին Արտաշատ		4 500
27	Վարդաշեն		629
28	Կանաչուտ		1 355
29	Մասիս		1 497
30	Քաղցրաշեն		3 115
31	Մխչյան		5 084
32	Մրգավետ		2 404
33	Մրգավան		2 050
34	Մրգանուշ		1 316
35	Շահումյան		4 555
36	Նարեկ		1 306
37	Նորաշեն		3 510
38	Նշավան		1 713
<b>Արարատի տարածաշրջան</b>			
1	Ավշար		5 187
2	Արալեզ		2 611
3	Արարատ		8 710
4	Արմաշ		2 686
5	Այգավան		4 535
6	Գինեվետ		727
7	Գոռավան		2 889
8	Դաշտաքար		682
9	Երասխ		902
10	Եղեգնավան		2 031

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
11	Զանգակատուն		1 229
12	Շաղափ		1 026
13	Ոսկետափ		5 171
14	Պարույր Սևակ	•Պարույր Սևակ •Տիգրանաշեն	796
15	Ուրցալանջ		209
16	Ուրցաձոր		3 246
17	Լանջատ		215
18	Լանջանիստ		222
19	Լուսառատ		2 755
20	Լուսաշող		687
21	Նոյակերտ		2 119
22	Նոր կյանք		2 914
23	Նոր ուղի		945
24	Սուրենավան		2 610
25	Սիսավան		2 258
26	Տափերական		3 967
27	Վարդաշատ		243
28	Վանաշեն		2 681
29	Փոքր Վեդի		3 298
<b>Մասիսի տարածաշրջան</b>			
1	Ագատաշեն		758
2	Այնթափ		9 041
3	Արբաթ		1 943
4	Արգավանդ		1 897
5	Արևաբույր		1 237
6	Գեղանիստ		2 945
7	Գետափնյա		1 458
8	Դաշտավան		2 276
9	Դարակերտ		2 654
10	Դարբնիկ		1 270
11	Զորակ		1 977
12	Խաչվառ		1 982
13	Հայանիստ		2 058
14	Հովտաշատ		3 766
15	Ղուկասավան		2 251
16	Մարմարաշեն		3 702
17	Նիզամի		1 299
18	Նորարաց		2 498
19	Նորամարգ		2 029
20	Նոր Խարբերդ		7 105
21	Նոր Կյուրին		1 035
22	Զրահովիտ		1 289
23	Ռանչպար		1 342
24	Սայաթ -Նովա		2 388
25	Սիս		1 507
26	Սիփանիկ		633

\*\* Գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2015թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.5%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2014թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 128	4 872
Ծնվածներ, մարդ	144	67	77
Մահացածներ, մարդ	87	43	44
Ամուսնություններ	65	X	X
Ամուսնալուծություններ	14	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավակերեսով, քառ.մ	32.7	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	241	117	124
հանրակրթական	1 230	590	640
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	114	79	35
նախնական մասնագիտական (արհեստագործական)	7	1	6
միջին մասնագիտական	53	25	28
բարձրագույն մասնագիտական	-	-	-
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	33 716	...	...
Մարզիկներ, մարդ	49	3	46
Զբաղվածներ, մարդ	3 950	1 936	2 014
նրանցից՝ գիտական հիմնարկներում	1	1	0.0
նրանցից՝ գիտության դոկտոր	0.0	0.0	0.0
գիտության թեկնածուներ	0.0	0.0	0.0
ուսուցիչներ	121	105	16
բժիշկներ	18	...	...
միջին բուժանձնակազմ	40	...	...
Գործազուրկներ, մարդ	320	283	37
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 392	836	556
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	315	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	12 820	...	...
թատրոն	587	...	...
համերգ	-	-	-
թանգարան	784	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	44	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	26	X	X
միջին ծանրության	12	X	X
ծանր	6	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: